

(Կը շարունակվի)

անգամները նոր շինութեան հիմնադրութիւնը կողմակաւ կառավարչական իշխան Գ. Ս. Գոլիցինի, Ս. Նինայի իգական բարեգործական ընկերութեան նախագահուհի իշխանուհի Մ. Ս. Գոլիցինիայի եւ այլ պաշտօնական անձանց ներկայութեամբ Մալթանքից յետոյ բոլոր հրաւիրված անձանց նախաձայնիկ առաջարկեց նորին պայծառապալուծիւնը պալատում:

Շաբաթ օր, նոյեմբերի 18-ին, կէսօրից յետոյ, հանգուցեալ խորէն եպիսկոպոսի մարմինը խուռն բազմութեան ուղեկցութեամբ, տեղափոխվեց ընկերացիների թանգարանի եկեղեցին Միւս օրը, պատարագից յետոյ, թանգարանի եկեղեցուց սկսվեց յուզարկաւորութիւնը դէպի Վանքի մայր եկեղեցին: Հաւաքվել էր անգամներ թաղութիւնը, որ հետեւում էր զազաղին: Հանգուցեալի յիշատակը յարգելու համար թիֆլիս էին եկել ներկայացուցիչներ հոգեւորականներից եւ հասարակութիւնից: Հոգեւորականներից եկել էին թիֆլիս, կաթողիկոսի կարգադրութեամբ, Գանձակից Ա. նանիա եպիսկոպոս Համազասպեան, Երեւանից Տիրալը վարդապետը, Ալեքսանդրօպոլից Մատթէոս վարդապետը, Գորուց Սահակ վարդապետը: Իրեւնեկայացուցիչներ Բագրատից եկել էին տիֆլիս Եղիաթէթ Սարգսեան, Թովմանէս Սաղաթիւնեան եւ Ներսէս Դաւթեան, Երեւանից թեմական դպրոցի ուսուցչական խմբի կողմից՝ Ա. Պօպովան: Այսպիսիպէ հասարակութիւնը հետագայով խնդրել էր ներկայացուցիչ լինել Ստ. Մալխասեանցին, Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը՝ Տիրալը Թովմանիսեանին, Պետերբուրգի հայ գաղութը եւ Վարդապետների երիտասարդութիւնը՝ բժշկական Բ. Նաւասարդեանցին: Պատկերներ դրված էին Պետերբուրգի հայ գաղութից, Երեւանի թեմական դպրոցից, «Մշակի» եւ «Մուրճի» խմբագրութիւններից, Նոր-Նախիջևանի հայոց Բարեգործական ընկերութիւնից, Վարդապետների երիտասարդութիւնից, Այսպիսիպէ հասարակութիւնից, Թիֆլիսի հայ գիշնադասներից, մի խումբ արհեստաւորներից, նոյնպէս եւ մի քանի յարգողներից: Թաղուը տեղի ունեցաւ Վանքի եկեղեցու բակում: Ծառեր արտասանեցին, թանգարանի եկեղեցում Անանիա եպիսկոպոսը՝ Կաթողիկոսի պատուներով, իսկ գերեզմանի վրա խոսեցին Բագրատի հայ հասարակութեան ներկայացուցիչներից երգուեալ հաւատարմատար Յ. Սաղաթիւնեան եւ Երեւանի թեմական դպրոցի ներկայացուցիչ Պօպովան: Խորէն Ստեփանէի դագաղի վրա խոսեցած ճառերի մէջ հանգուցեալը հանդիսացաւ իրեւնե հասարակական եռանդուն գործող թէ գրչով եւ թէ խօսքով: Նա յայտնի դեր է կատարել իրեւնե գրական մարդ, իրեւնե մանկավարժ եւ իրեւնե տաղանդաւոր հոգեւոր, որի հաւասարը չը կար ներկայ սերնդի մէջ: Թաղման կարգը վերջացաւ ժամի 2-ին:

«Руч. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ սովորական հայկական երեկոյթը այս անգամ Մոսկվայում նշանակված է կիրակի, դեկտեմբերի 3-ին, Ազնուականների ժողովարանի դահլիճներում: Երաժշտական բաժնի պրոգրամը խոստանում է շատ հետաքրքիր լինել: Երեկոյթին մասնակցելու համար հրաւիրված են երաժշտասէրների ընկերութեան օրկէստրը Ա. Լիտվինովի ղեկավարութեամբ, խառն երաժշտական խումբ պ. Բոգուսլավի ղեկավարութեամբ եւ սօլիստները: Ժողովարանի դահլիճները, անցյալ տարիների նման, յայտնի նկարիչները կը զարդարեն էֆֆէկտով, հայկական ճաշակով:

Նոյեմբերի 12-ին, կիրակի օր, Պետերբուրգի հայոց եկեղեցում ծնկաչոք մաղթանք կատարվեց Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի շուտափութ առողջութեան համար: Եկեղեցին լիքն էր աղօթողներով:

Եկող 1901 թւից երկրագործութեան միջնաշրջանը վճռել է սահմանորոշ տեսնելիների մի մեծ խումբ կազմակերպել, որը, «Руч. Вѣд.» լրագրի խօսքով, կը սկսի զաղթականների համար տեղեր պատրաստելու աշխատանքները Անդրկովկասեան երկրում, իսկ այդ դրոները կատարելուց յետոյ, նոյնպիսի աշխատանքներ կը սկսի հիւսիսային Սիբիրի եւ Ստաւրոպոլի նահանգների շրջաններում:

Սովորական դեպքերում, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, հաղորդեց ներքին գործերի մինիստրին սովորանի իրադէն, որով հրաւանագրված է առանձին հոգացողութիւն ունենալ Կովկասից եւ մահմեդական ուրիշ տե-

ղերից եկող գաղթականների վրա՝ մատակարարելով նրանց կենսական միջոցներ, տաք հագուստ եւ ճանապարհածախս, մինչեւ որ նրանք կը հաստատվեն անաստիական նահանգներում:

Շաբաթ, նոյեմբերի 18-ին վրաց Ազնուականութեան թատրոնում տեղի ունեցաւ հայ դերասանական ընկերութեան առաջին ներկայացումը: Խաղացին Ս. Կոպէի «Թագի համար» դրաման, որն անցաւ շատ թոյլ, գլխաւորապէս չորհրդի ներկայացման մասնակցող սիրողների Դերասաններն էլ, նոյն իսկ չորհրդի Տէր-Դաւթեան, իրանց դերում չէին եւ աչքի էր ընկնում իր խելացի խաղով միայն պ. Յարութիւնեան:

Հեռագիրը հաղորդեց արդէն, որ վախճանվեց Վարչալայի գեներալ-նահանգապետ իշխան Ա. Կ. Իմէրէտիսկիի Հանգուցեալը Իմէրէթիայի արքայորդի Կոստանտինի որդին էր: Նա ծնվել է 1837 թւին Մոսկվայի նահանգում եւ իր ամբողջ կեանքը անց է կացրել Ռուսաստանում, վարելով զանազան պատասխանատու պաշտօններ: Նա չորս տարի միայն վարեց Վարչալայի գեներալ նահանգապետի պաշտօնը:

Կովկասի շատ տեղերում կան հանքային աղբիւրներ, որոնք մինչեւ այժմ դեռ չեն մշակված եւ հատարակութիւնը ոչինչ օգուտ չէ քաղում դրանցից: «Ноб.» լրագիրը հաղորդում է, որ եկող տարվայ սկզբում այդպիսի հանքային շրերի հարցը կը քննվի կառավարչական շրջաններում:

Անդրկովկասեան չէյնուկիսումը, ինչպէս հաղորդում է «Кавказ» լրագիրը, չըջաբերական հրամանաւոր ուղարկեց, ինչպիսիք որ Անդրկովկասի կազմները եւ նրանց ծովերը իրանց սրտաբուրդն աղօթքները վերադառնալու թաղաւոր Կայսրի առողջութեան համար:

«Южн. Край» լրագիրը հաղորդում է, որ ուսուց պիսոյը կարգադրութիւն է արել, որ հոգեւոր դպրոցների վարչութիւնները պարտաւոր են խառնութեամբ արգելել աշակերտներին հրացաններ կամ այլ զենքեր պահել իրանց մօտ: Այն աշակերտները, որոնք կը դիմադրեն այդ կարգադրութեանը, երկարելու են խիստ պատիժների եւ մինչեւ անգամ կարճակէն դպրոցից:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

— Անգլիական լրագիրներից մէկը հաղորդում է, որպէս ճիշդ տեղեկութիւն, թէ Զօն Մօրէյ չուտով բոլորովին հեռանալու է քաղաքական անպարէզից եւ այդ հետեւումը կատարվում է այն ժամանակ, երբ նորից հանդէս է գալիս լորդ Բոգերրի, որպէս ազատամիտ կուսակցութեան պարագլուխ: Յայտնի է, որ Զօն Մօրէյի եւ Բոգերրիի հայեցողների մէջ ներկայ քաղաքական հարցերի վերաբերմամբ մեծ տարբերութիւններ կան:

— Ծրանիական լրագիրները մանրամասնութիւններ են հաղորդում այն ընդունելութեան մասին, որ ցոյց արվեց Կրիզէրին Պարիզում: «Eclair» հաւատացնում է, որ Լուրէ հրաւիրեց Ելիսեան պալատը Կրիզէրին հակառակ մի քանի մինիստրների ցանկութեանը: Ուրիշ լրագիրների ասելով, կառավարութիւնը՝ ենթարկվելով հասարակութեան տրամադրութեանը, Կրիզէրին ցոյց է տալիս աւելի մեծ ուշադրութիւն, քան նա մտադիր էր սկզբում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼիվԱՒԻԱ, նոյեմբերի 18-ին, առաւօտեան 11 ժամին Թագաւոր Կայսրը երէկվայ օրը եւ անցած գիշերը կատարելապէս լաւ անցկացրեց: Ինքնազգացումը շատ լաւ է: Երեկոյեան 9 ժամին տաքութիւնը 36,1 էր, զարկերակը—60, այսօր առաւօտեան—35,6, զարկերակը 60: Լէյը-վիրաբոյժ Գիրշ պատաւաւոր բժիշկ Պօպով բժիշկ Տիխոնով:

ԼիվԱՒԻԱ, նոյեմբերի 19-ին, առաւօտեան 11 ժամին Թագաւոր Կայսրը երէկվայ օրը եւ անցած գիշերը լաւ անցկացրեց: Այսօր ինքնազգացումը կատարելապէս լաւ է. ախորժակը բացվում է. ոյժերը աստիճանաբար աւելանում են: Երէկ երեկոյեան տաքութիւնը 36,6 էր, զարկերակը—64, այսօր տաքութիւնը 36,1 է, զարկերակը—72: Լէյը-վիրաբոյժ Գիրշ պատաւաւոր լէյը-բժիշկ Պօպով. բժիշկ Տիխոնով:

ԼիվԱՒԻԱ, 20 նոյեմբերի. առաւօտեան 11 ժամին Թագաւոր Կայսրը երէկվայ օրը եւ գիշերը շատ լաւ անցկացրեց. երեկոյեան 9 ժամին տաքութիւնը 36,6 է, զարկերակը 72 է: Այսօր առաւօտեան ինքնազգացումը շատ լաւ է, ախորժակը եւ ոյժերը աւելանում են: Առաւօտեան տաքութիւնը 36,3 է, զարկերակը 66 է: Լէյը-վիրաբոյժ Գիրշ պատաւաւոր լէյը-բժիշկ Պօպով. բժիշկ Տիխոնով:

17 նոյեմբերի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Պրէօբրաժնսկի տաճարում բոլորական գաղութի անդամները մաղթանք կատարեցին Թագաւոր Կայսրին առողջութիւն պարգեւելու համար:

Թագաւոր Կայսրի առողջութեան համար կատարված մաղթանքների մասին հեռագիրներ են ստացված Սամարայից եւ Իվանովօ-Վօդնեսկից:

ԲԵՐԼԻՆ. Գնդապետ Եօրկ Ֆօն-Վարտենբուրգ նոյեմբերի 14-ին, երեկոյեան, վախճանվեց Գուսլայնում աճխահատից:

ՇԱՆԳՀԱՅ. Ստացված տեղեկութիւններին նայելով՝ Մէյմուրի այցելութիւնը Չժանչիդուն փոխարքային աղոթութեամբ պատկնց: Նրանց յարաբերութիւնները խիստ բարեկամական են: Շենսիի նահանգապետը պահանջեց խանկուսի փոխարքայից ուժ արագածից թնդանօթ: Փոխարքան հրամայեց ուղարկել թնդանօթները Շենսի:

Խանկուսի օտարերկրեայ հիւպատոսներից մէկը տեղեկութիւն տալով, թէ Տոնֆուսեանի 10,000 մարդուց բաղկացած զօրքը մոտք գործեց Կուսուսու նահանգը, որպէս զի միանայ Տուանի հետ Կայսրի դէմ ապստամբելու համար:

ԼՕՆԴՈՆ. Լուրերին նայելով՝ Կիտչենբեր այսօր ասանձնում է զօրքերի գլխաւոր հրամանատարի պաշտօնը Աֆրիկայի հարաւում:

ՊԵԿԻՆ. Զրանիական զօրաբաժինը գտնվում է այժմ Շենսիի նահանգի սահմանի վրա, Յինդին արեւմտակողմում, եւ մտադրվում է ճանապարհ ընկնել դէպի Տայնֆու:

ՇԱՆԳՀԱՅ. Շաբաթ օրը խանչօտում վառողի բռնկումից սպանվեցին 40 մարդ:

ՏԵՆԻՍ. Ժամանակաւոր կառավարութիւնը հրատարակեց մի որոշում, որով արգելվում է մահվան պատժի սպառնալիքով, քաղաքում եւ նրա արուարձաններում զենք պահել: Զենքերը յանձնելու համար կը նշանակվի հինգօրեայ ժամանակամիջոց: Զգուշութեան այս միջոցը խիստ անհրաժեշտ է, որովհետեւ քաղաքում գտնվում են մեծ քանակութեամբ զենքեր եւ բազմաթիւ «մեծ բռնկեցներ» թաղման են քաղաքում:

ՊԵԿԻՆ. Եւասոնիան պահանջում է, որ դեսպանների կազմած յայտագիրը փոխիւթեան ենթարկվի եւ աւելացնի նրա վրա այն պահանջը, թէ Զինատանը պարտաւորվում է արձան կանգնեցնել եւսպանական դեսպանատնի դիւանատան կառավարիչ Սուգի-Եմալի վրա:

ՊԱՐԻՉ. Սենատը միաձայն ընդունեց Կրիզէրին համարվանք յայտնելու առաջարկը այնպիսի խօսքերով, որոնք գործ էին անված պատասխանողների ժողովում: Առաջարկութիւնը տեղի ունեցաւ սենատի զանազան խմբերի նախագահների կողմից:

ՊԵԿԻՆ. Գերմանական դեսպանատան ցանկութեամբ, պրինց Յինի միջոցով, պաշտօնից արձակվեց Յանույի քաղաքային խորհուրդը, թշնամական ազդեցութեան համար քրիստոնեաների դէմ:

ՏԵՆԻՍ. Նահանգական գանձապահ Տանրենգուան Պատիւնֆուում դատաւարտված է զինուորական դատարանի կողմից մահվան պատժի:

18 նոյեմբերի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վարչալայի գեներալ-նահանգապետ իշխան Իմերեանսկի վախճանվեց նոյեմբերի 17-ին:

ԼՕՆԴՈՆ. Բօքսթու հաղորդում է. «Դէվէտու» զօրպի քաղաքապահ զօրքը, որ բաղկացած էր մօտ 400 մարդուց, նոյեմբերի 10-ին անձնատուր եղաւ բօէրներին երկու թնդանօթով, կորցնելով նախ 15 սպանված եւ 42 վիրաւորված: Բօէրները 2500 հոգի էին: 1480 մարդուց կազմված անգլիական զօրաբաժինը, որ պէտք է Դէվէտուց դնար օգնութեան, չը կարողացաւ հասնել ժամանակին: Գեներալ Նօկս, երբ նրա զօրաբաժինը միացաւ այդ զօրաբաժնի հետ, նոյեմբերի 13-ին մտաւ Դէվէտուց զօրպի Գաղաքը մաքրվեց. նրա մէջ միացել էին միայն 75 վիրաւորվածներ եւ հիւանդներ: Նօկս հետաժողով եղաւ բօէրներին, որոնք գտնվում էին Շտէյնի եւ Դէվէտի հրամանատարութեան տակ եւ ջարդեց նրանց Վաալուսկի մօտ. բօէրները նահանջեցին դէպի հարաւ-արեւմուտք:

ՖԻՆԵՐԲՈՒՐԳ. Ֆրէյբուրգից դուրս եկած մի զօրաբաժին աղաւթեց Շվէյցէր-Բնէկէյի բերդապահներին: Այդ կէտը պաշարող բօէրները թեթեւ ընդդիմադրութիւն ցոյց տուին, բայց յետ մղվեցին:

ԼՕՆԴՈՆ. Պաշտօնապէս Բօքսթուի տեղ նշանակված է Կիտչենբեր, որ ստացաւ գնեւորալ-լէյտնանտի աստիճան տեղական գլխաւոր հրամանատարի տիտղոսով:

ԲԵՐԼԻՆ. Մինչեւ այժմ այստեղ ոչինչ յայտնի չէ Կրիզէրի ընդունելութեան համար կազմվելիք յանձնաժողովի մասին: ՊԱՐԻՉ. Վաղը կը հրատարակվի կառավարչական կարգադրութիւն Հապալայի գաղնագրերի եւ կօնվեցիաների պարտադրական զօրքաւորման մասին: Պրանսիայի յարաբերութիւնները մէջ միւս պետութիւնների հետ:

ԲԵՐԼԻՆ. Վաղըրգէէ հաղորդում է, թէ Կալզանից վերադարձող զօրաւորը վաղը Զինատանից կը շարունակէ իր ճանապարհը: Արշաւախմբի առողջական դրութիւնը բաւարար է: ՊԵԿԻՆ. Պիչօն լրագրութիւն է ստացել ստորագրելու եւ ներկայացնելու չինացիներին դեսպանների կողմից ընդունված առաջարկութիւնները, եթէ բոլոր դեսպանները համաձայն կը լինեն իրար հետ: Երեւի, առաջարկութիւնները նախօրօք կենթարկվեն փոփոխութիւնների:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Մինիստրութեան այսօրվայ նիստում Գէյ հաղորդեց չինական ճշնաթմարի այժմեան դրութեան մանրամասնութիւնները: Լուրերին նայելով՝ փոխընդաներից մէկը խիստ եռանդով գործում է «Մեծ-Բուռնեցներ» դէմ. նա պատժեց յանցաւորներին եւ պաշտպանում է օտարերկրացիներին: Հաղորդում են նոյնպէս, թէ դերմանացիները, այստեմանային, զփոխ են նրանից եւ ձեռնարկում են նրա դէմ պատերազմական գործողութիւններ:

ԿԱՊԵՏԱՒՏ. Կապի ամբողջ գաղթականութեան մէջ պահակախմբերը ուժեղացնվում են. չըջաններում պատերազմական դրութիւն յայտարարելու ազդեցութեան աստիճանում է:

ԼՕՆԴՈՆ. «Morning Post»-ին հաղորդում են Շանգհայից նոյեմբերի 17-ին, թէ Վուչօնի փոխարքայ Չժանչիդուն պատասխանաւորութիւն յայտնեց զաղաքներին. կենսական մըթերքների ուղարկումը չինական արքունիքին, եթէ նախկին փոխարքայ Լիուկունի կը համաձայնի նոյնը անել: Լիուկունի հեռագրով պատասխանեց, թէ նա կը զաղաքներէ զենքի մատակարարումը, բայց կը շարունակէ կենսական մթերքների ուղարկել, քանի որ Կայսրը կարիք ունենայ:

Շանգհայից հաղորդում են նոյեմբերի 17-ին չինական աղբիւրներից, թէ, ինչպէս լսվում է, Տեանձինում մեծ անհանգստութիւն է տիրում: «Մեծ-բուռնեցներ» եւ չինական զօրքերը վերադառնում են այնտեղ: Երկիրը են կրում նոր անկարգութիւններից, երբ ձեռքը նաւահանութիւնը: «Daily News»-ին հաղորդում են Շանգհայից նոյեմբերի 17-ին, թէ անցած չորեքշաբթի հիւպատոսները հրատարակեցին մի ընդհանուր յայտարարաւթուղթ, ուղղված այնպիսի առարկաների ներմուծութեան դէմ, որոնք կարեւոր են զենք պատրաստելու համար: Զինգչաթի օրը եւսպանական հիւպատոսը, որ գործում է Տօկիոյից ստացված հրամանների համաձայն, յայտնեց, թէ նա յետ է առնում իր համաձայնութիւնը այդ յայտարարաւթուղթի վերաբերմամբ: Նրա այդ վարմունքը մեծ տառաջանութիւն պատճառեց միւս հիւպատոսներին: Լուրեր են պտտում, թէ չինացիները զբաղված են զենքեր եւ ուղղվածութեւք ձեռք բերելով: Մաքալային վարչութիւնը, նրան տուած հրահանգների զօրութեամբ, շատ ներողամտութեամբ է վերաբերվում, երբ զենք եւ ուղղվածութեւք է ներմուծվում այլ առարկաների աւանդում:

ՊԱՐԻՉ. Բոլոր օտարերկրեայ դեսպանները Զինատանում համաձայնեցին այն պայմաններին, որոնք պէտք է առաջարկվեն Զինատանին, եւ նրանք մէջ չը կայ ոչ մի տարաձայնութիւն: Այս պայմանները մօտիկ ապագայում կը ներկայացվեն չինական լրագրողներին:

ՊԱՐԻՉ. Կրիզէր ժամանեց Հիւսիսային երկաթուղու կայարանը 1 ժամ եւ 20 րոպէին եւ մտաւ այն վագօնը, որ կցված էր express գնացքին: Ահագին բազմութիւն ողջունում էր նրան այն ժամանակ, երբ պատասխանաւորութիւնները մտնում էին վագօն: Լսվում էին աղաղակներ. «Կեցցէ միջնորդ դատարան: Կեցցէ Կրիզէր: Կեցցեն բօէրները»: Գնացքը շարժվեց 1 ժամ եւ 50 րոպէին՝ ողջոյն անվերջ աղաղակների մէջ:

ԿԱՊԵՏԱՒՏ. Նոյեմբերի 17-ին, Գնդապետ Մէյրիկ Իւանովիչի մի բառալիծով նոյն-

բերի 12-ին գրաւեց Լիւթիմբուրգ, առանց դիմադրութեան հանդիպելու: Այնու ամենայնիւ նա կատարել կոխ ունեցաւ 400 բռնիքներ հետ քաղաքից 10 մղոն հեռու:

ԴՈՒՐԻՍԱՆ. Նոյեմբերի 18-ին. Բօլոնիայի Ստադիոնի շրջանում եռանգուս գործունէութիւն են ցոյց տալիս: Երէկ Ստադիոնի մօտ տեղի ունեցաւ թեթիւ ընդհարում:

19 Նոյեմբերի
ԲԵՐԼԻՆ. Ինչպէս հաղորդում են հեռագիրները, Կրիզէր այսօր կը համար կեօն: Նրա ուղեւորութեան մասին զէպի Բերլին, որ պէտք է տեղի ունենայ հետեւեալ շաբաթ, զեռ եւս ոչինչ յայտնի չէ: Զը Նայելով զրան, Մագդէ-բուրգի եւ Բերլինի ազգային ֆէրաճները պատ-րաստութիւններ են տեսնում հանդիսաւոր ընդունելութեան համար: Հաստատ յայտնի է այն, որ Մագդէբուրգում եւ Բերլինում սենեակ-ներ են պատուիրված Կրիզէրի համար: Ոչինչ չէ լսվում պաշտօնական ընդունելութեան մա-սին: Կեօնից հաղորդում են, որ այստեղի պաշ-տօնական շրջաններում տեղեկութիւն է ստաց-ված, թէ իբր կայսրը չի ընդունի Կրիզէրին: Ինչպէս երեւում է, այդ բոլոր հարցերը զեռ եւս չեն վճռված:

ԿԵՕԼՆ. Հասաւ գնացքը Կրիզէրի սալօն-վազմով: Այստեղի գլխաւոր կայարանում, գնացքի գալուց շատ առաջ, հաւաքվել էր բազ-մաթիւ ամբող, որ եռանդով ողջունում էր Կրիզէրին: Պաշտօնական ընդունելութիւն տե-ղի չունեցաւ:

ԼԻՒՏՏԻՆ. Կրիզէրի գալուց առաջ կայա-րանի մօտ հաւաքվեց մեծ բազմութիւն: Երբ հարկաւոր բողոքում կայարանի դուռը փակվեց, ամբողք կուրծքի նրան եւ ներս խուփեց զէպի պլատֆորմը, որտեղ ժամադրմանը իզուր աշխատում էին սուխներով ցրվել նրան: Կրիզէրի գնացքը յետոյ՝ ամբողք 300 մարդ, մի քանի ուսանողների առաջնորդութեամբ, ուղեւորվեցին զէպի անգլիական հիւպատոսա-րանը եւ ազմակից ցոյցեր արին այնտեղ:

ԿԵՕԼՆ. Կրիզէրին պաշտօնական ընդունե-լութիւն ցոյց չը տուին այստեղ, ինչպէս լրս-վում է, նրա համար, որ օտարերկրացի պետու-թեան զօրի այցելութեան ժամանակ անհրա-ստ է նախօրոք գորգըութիւն ունենալ կայ-սերական պալատի հետ, իսկ այս բանը չէր կատարվում: Այս հիման վրա կարելի է հաւա-նալիս համարել, որ Կրիզէր առ այժմ կը հրա-ժարվի Բերլին այցելելու մտադրութիւնից:

ԼԻՒՏՏԻՆ. Կրիզէր հասաւ այստեղ ժամի 7-ին: Կայարանում գտնվում էին մի քանի պատգամաւորներ եւ Տրանսիլանիան կոմիտե-տի անդամները, որի նախագահը Լիւտտիլի բը-նակիչների կողմից յանձնեց Կրիզէրին հա-մակարանքի մի ուղեւոր:

ՊԵՅԻՆ. Մայիսի Գերգատտէ, որ լուր բերեց Պեկին կոմս Եօրի մահվան մասին, գիշերել էր երկուշաբթի օրը Եօրիի հետ մի տան մէջ Գու-այկալում: Նրանց սենեակները կից էին եւ տա-քացնվում էին միմյան կրակարաններով: Ծա-ռաները երկկոյնեան սենեակ բերին կրակարաննե-րը, բայց Գերգատտէ հրաժարեց նրանցից եւ դարձրեց Եօրիի ուշադրութիւնը սենեակները այդ կերպով տաքացնելու վտանգաւորութեան վրա: Եօրի ասաց, թէ ցուրտ է եւ հրամայեց երկու կրակարաններն էլ տանել իր սենեակը: Նա վաղ պակեց քնելու եւ գիշերը զարթոյց մի քանի անգամ: Առաւօտեան 10 ժամին Եօրի մեռաւ: Ըստ երեւոյթին, գիշերը Եօրիը տկա-րութիւն է գգացել—նա փոխել է սպիտակե-ղէնը: Մարմինը կը բերվի այստեղ վաղը եւ ժա-մանակաւորապէս կը թաղվի, իսկ յետոյ կը տեղափոխվի Գերմանիա:

ՇԱՐԼԵՐՈՒՄ. Գնացքը, որի մէջ էր Կրիզ-էր, հասաւ այստեղ 5 ժամ 40 րոպէին: Երբ գնացքը մօտեցաւ կայարանին, ժողովրդի մեծ բազմութիւն ողջունում էր Կրիզէրին աղա-ղակելով: Կեցեց Կրիզէր, կեցեց Տրանսիլան-ի Կրիզէր զուրս չեկաւ վազմից եւ պատուհա-նի մօտ կանգնած՝ ընդունեց այն հովանաւոր-ների պատգամաւորութիւնը, որոնք ապրում են Շարլէրուայում: Հինգ րոպէ կանգ առնելուց յետոյ գնացքը շարունակեց ճանապարհը:

ԼՕՆԴՈՆ. Կրիզէրի հեռագիրը Բուլոնիո-տէնից Նոյեմբերի 17-ին. Գիենեալ Նօկս յար-ձակվեց Դէվիտի վերջապահների վրա Բէյր-բէրգի մօտ, Դէվիտազօրակից զէպի Սմիթիից գնալու ճանապարհին: Կիւրե տեւեց երկու ժամ: Թշնամին, որի ետեւն անցան անգլիա-ցիները, նահանջեց զէպի հարաւ-արեւելք: Վերջին տեղեկութիւններով՝ Նօկս բնդհարումն ունեցաւ Դէվիտի զօրքերի հետ Տաֆէլբէրգի մօտ, 12 մղոն զէպի հիւսիս Բեռլինից: Գիենեալ Սէտտ Նոյեմբերի 15-ին թեթիւ:

Կոխ ունեցաւ Հերցոգի զօրաբաժնի հետ Կօօ-ֆի եւ Վօլֆսկրապի մօտ: Բօլոնիայի յաղթե-լուց յետոյ, Սէտտ գրաւեց Լուկսօֆ: Պէլէ-ընդհարումն ունեցաւ Վիլսնի եւ Էրադմուսի միացած զօրաբաժնիների հետ: Թշնամին յետ մղվեց իր դիրքերից, որ գրաւել էր Բիտֆօն-տէնի մօտ, Նօտտէրկօպի հիւսիս-արեւմտա-կողմում: Փոխ-գնդապետ Լյօր ծանր վի-րաւորված է. բայց զրանից վերաւորված են 5 օֆիցերներ եւ 50 զինուորներ: 5 մարդ սպանված են: Հաղորդում են, որ մեծ կոխ է տեղի ունեցել Նօկսի եւ Դէվիտի մէջ Բուլո-նիայի մօտ:

20 Նոյեմբերի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագուհի Կայսրուհի Մա-րիա Ֆէօդօրովնա Մեծ Իշխանուհի Օլգա Ա-լեքսանդրովնայի հետ բարեհաճեց Նոյեմբերի 19-ին ճանապարհ ընկնել Կօպէնհագէնից Գաու-չինա:

ԿԵՕԼՆ. Կրիզէր, Լիւկսէմբուրգից եկած զեռպանից տեղեկութիւն ստանալով. թէ կայս-րը, առաջուց կարգադրելով իր ժամանակը, դժբաղդաբար, չէ կարող այժմ ընդունել Կրիզ-էրին, վճռեց Բերլինը այցելելուց առաջ ու-ղեւորվել Հօլլանդիա:

ՇԱՆԳՀԱՅ. Պաշտպանողական շինութիւննե-րը եմանցելում նորից աշտոնութեամբ կառուց-վում են. այստեղի զինարանից ուղարկված են նաւերով Յզեանիէն մարտկոյժ քսան երկու-հարիւր ֆունտանոց պայթուցիկ ականներ:

ԿԱՊԵՏԱՊ. Բօրերտս ուղեւորվում է Եւ-րոպա Նոյեմբերի 28-ին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պեկինից ստացված հեռագիրը հաղորդում է, թէ Գերմանական եւ անգլիա-կան զեռպանները առաւօտեան խորհրդակցու-թիւն ունեցաւ ամերիկական զեռպանի հետ: Մեծ մնաց մի ժամ, Սուտով երկու ժամ: Սոր-հրդակցութեան նիւթը յայտնի չէ, բայց ընդ-հանուր կարծիքը այն է, թէ Կօնցի հրաւիրել էր զեռպաններին հաղորդելու նրանց վախճ-մանից ստացված մի հեռագիր, որ վերաբերում է ընդհանուր համաձայնութեան մի քանի կէ-տերին: Լի-Պոնց-Չանց հեռագիր ստացաւ ար-քունիքից, որով համաձայնութիւն է յայտն-վում Շէնսիի նահանգապետին մահվան պատժի ենթարկելու մասին: Ստորագրողներին նա հրամայեց ամառ, թէ կայսրը ուղարկում է նա-հանգապետին մետաքսեայ փուկ, որպէս կախ-վելու սովորական առաջարկութիւն:

Գերմանացիները մեծ գործունէութիւն են ցոյց տալիս. իւրաքանչիւր օր Պեկինից դուրս են գալիս փոքրիկ զօրաբաժնիներ եւ շատ քիչ անգամ է պատահում, որ վերադառնալով՝ առանց իրանց հետ բերելու մի քանի Վեմ-բուլոնցիների: Եւ առանց գրաւելու զէպեր: Ամերիկական հիւ-պատոսը հաղորդում է Տեանսիից, թէ Վեմ-բուլոնցիները ուժեղացրել են իրանց գործու-նէութիւնը շրջականներում:

ԿԵՕԼՆ. Կրիզէր, ի միջի այլոց, ընդունեց Բօննի համալսարանի ուսանողներին եւ հին-գերմանական դաշնակցութեան պատգամաւո-րութիւնը:

ԲԵՆԳԱԼ. Այսօր սերբիական հոգեւորա-կանութիւնը միտրօպօլիտ Իննօկիտիի առաջ-նորդութեամբ այստեղի տաճարում մաղթանք կատարեց Ռուսաց Կայսրի առողջութեան հա-մար, որին ներկայ էին թագաւորը, մինիստրը-ները, զիւլթաւատիական մարմինը եւ բազմա-թիւ հասարակութիւն:

ԽՈՐԱԳԻՐ. ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱՆԱԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԷՆԱՍ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
«Տաղեր ու խաղեր» վերնագրով
Հ ո Ր Ս Բ ա ժ ա ն մ ու ճ ո Վ
ՀԱՐՈՒՍՏ ԵՐԳԱՐԱՆԸ
Գինն է 60 կօպ.

Ցանկացողները կարող են դիմել АЛЕКСАНД-рополь, АЛЕКСАНДРУ МХИТАРЯНЦԻ կամ ТАПО-графия К. С. Саноянца. 4—6

Ծ Ա Խ Վ Ո Ւ Մ Է

Թիֆլիսի Միքայէլեան փողոցի վրա մի տուն, այգիով, № 113. հողի տարածութիւնն է 1311¹¹/₁₀₀ քառ. սաւառն: Այս կալուածքը ձեռք բերել ցանկացողները կարող են դիմել անմի-ջապէս պ. ՊՕՊԷԼԻՆ, որը ապրում է մի եւ նոյն տանը: 2—3

Փաստաւրան շերի ԵՂԻՇԷ ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆ ՏԵՐ-ԱԶԱՐԵԱՆԸ ընտելում է Թիֆլիսում, վաշքի Մեծ փողոցում, Պօտե-նիայի տանը, № 3, ձախ ներքին զանգակ: 1—3 (Կ. հ. չ.)

ԸՄՍԻՍ 25-ից կը բացվի
Բազում, Գալանթարանի պատաստում, Մեմ-րօպօլ հիւրանոցի դէմը, № 32 Առեւտրական տուն իշխ. 2. Ա. 20ԲԱՄԱՆԻ եւ Ընկ. գինու պահեստի բաժանմունքը: 1—1

Բ Յ Շ Կ Ա Պ Ե Տ
ԳԵՂՈՐԳ ԹԱԳԷՈՍԱՆ
Ներքին եւ երկաթից հիւանդութիւններ: Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօ-տեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օ-րից) 5—7 ժ.: Վեխմաքիսօպալա փողոց, տ. № 24: (Կ. հ. չ.) 8—20

Ս ա ղ Գ ի Ս Վ. Ա թ ր ա ի ա լ ե ա լ
Հասցէ. ՍՕԼՈՒԿ, Գանձակարեա փող. տ. Թամաշեվի, № 26, բն. № 9.
Ուղիորդելու եւ պարտաւորում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշ-խաւորութեամբ եւ հարկաւոր զէպելում—յանձնարարականներ տալով պարտաւորունք-ներ գտնելու համար
Հ Ա Շ Ո Ւ Ա Պ Ա Հ Ո Ւ Ի Ն
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով: Գիւղատնտե-ական, նախարարական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգե-նաւային հաշուապահութիւն:
2) Առեւտրական թուաբանութիւն:
3) Առեւտրական թղթակցութիւն:
4) Պարտաւորական օրէնքները:
5) Գեղարվեստութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղ-ղուն անկնայաւ ձեռագրերի:
ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅԻՆ ՍԿՍՎԵԼՈՒ Է ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երե-կոյեան: (Կ. ո. չ.) 3—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-10
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԵՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՐ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու-շաբաթ մի անգամ:

Եւ հաւաքում Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլսա Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 22 Նոյեմբերի (5 ղեկավարներ)—չորեքշաբթի ՍԻՐԿԱՍՍԻ, կապիտան ԳԱՐ-րիկ: Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոնախմբի տրվում են ուղիորդական պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպոլի մէջ, ընդու-նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործադատարանին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԳԱՐՍՈՆ, Նաբէրէժնայա: ԹիֆլիսՈՒՍԻ—պ. Օ. Գ. Բարե-կինդանանին, Սիօնի փող. Ուշափարուխօվի եւ Մայիսարաձէ բարձրաւորաւ: ԲԱԳՈՒՆԵՂԵՐ, Վ. եւ Ի. Մուքաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍ-ՍԻՅԱՎ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործախաղութիւն (Կ. հ. չ.) 20—20

ԲՕԹՕԹԻ ՅԵԼՈՒԼԵՐՆԻ ՍԵՐՄ
Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ

Պարսեօրեան դրուքեանը պատրաստված
Հ ս կ ո ղ ու թ ե ա մ ք

Մ Ի Հ Ր Ա Ն Ի Ս Ա Ն Դ Ե Ա Ն Ի

Առաջին կարգի վալեալ մասնագէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանին:

Երկար տարիներ է ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուաւ եւ ծանօթ ֆիրմա ՄԻՃԻՆԻ ԽԱՆՅԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պ ա ս թ է օ ր ե ա ն ղ ր ո թ է Ե ա մ ք ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հունտերէն յատկապէս եւ ամենաւոր իննամօք պատրաստել տուած, եւ որոյցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած եմք Շերամապահական կայարանն քննութեան համար:

Ամեն անոնք՝ որք կը փափաքեն դիւրամատելի գինեով լաւ ապրանք գնել եւ ապահով ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայիսարաձէ եւ Ուշափարուխօվ քարաւանարան № 16—17, Ա. Գ. ԵՐՄԷՆ եւ ընկ. գրասենեակը: (Կ. հ. չ.) 4—30

ՀԱՇՈՒՄԱՆԻՆԻՆԻ ԳԱՐՆԵՐԵՐԻ XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆՆԱՄԵԱՆ

Հեղինակ Քեռնարկի առեւտրական եւ գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՅԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս եւ բաշխաւորով, եւ եղած ղէպերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՆԻՔԻ ԱՆՈՒԿԱՆԵՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հան-դերձ նաւթային արդիւնաբերական եւ կերօսիին գործարանական հաշուետեսութեան:
Բ) Առեւտրական թուաբանութիւն:
Գ) Առեւտրական նաւակապարտութիւն:
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնադրութիւն:
Ե) Գեղարվեստութիւն եւ ամենալատ ձեռքերի ուղղելը:

Պարագլուխները սկսվելու են 1901 թ. յունվարի 15-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20ԲՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագլուխներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան Կ Ո Ւ Կ Ա Ն, Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Նիկոլայեւսկայա փող. № 46):
Վերջինից հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹիֆլիսՈՒՍԻ, հեղինակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառարաններում: Գինն է 3 ր. 50 կօպէկ: Առեւ-րաքաղաքացիները գիշերը համար կարող են դիմել հեղինակին, առանց պիտի ծախս վճարելու: (Կ. հ. չ.) 4—20